ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ
(Ծննդյան 125-ամյակի առթիվ)

«Մեր պատմական հուշարձանների գործը
համաժողովրդական գործ պետք է լինի...»

Մ. Սարյան

Հայկական հուշարձանների պահպանության խնդիրը մշտապես եղել է Մարտիրոս Սարյանի ուշադրության կիզակետում: 1903 թ. նա ուղևորվեց իր նախնիների մայրաքաղաք Անի. այդ հանդիպումը հեռավոր անցյալի հետ խթանեց նրա հետաքրքրությունը հայկական հնությունների և ճարտարապետական կոթողների հանդեպ: Զարմանալի չէ, որ 1907 թ. ամռանը, երբ Անիում աննախադեպ պեղումներ ծավալվեցին Ն. Մառի և նրա տաղանդաշատ աշակերտ Հ. Օրբելու գլխավորությամբ, Սարյանը նորից այցելեց ալեհեր ավերակները և գրեց «Դեպի Անի» հոդվածը[1]:

1914 թ. Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման խնդիրներով մտահոգ՝ Մ. Սարյանը բաց նամակով հանդես եկավ Թիֆլիսում լույս տեսնող «Մշակ» թերթում: Նամակի հետգրության մեջ նա հայտնում է. «Ի նկատի ունենալով հրաշագեղ հնությունների վերին ծայր ողորմելի ու անկյալ վիճակը, նրանց ոչնչացումը, կորուստը և նույնիսկ կողոպուտը, Մոսկվայում կազմակերպվում է հայկական հուշարձանների պաշտպանության ու պահպանման ընկերություն, որի նպատակն է այդ հնությունների ու նրանց նվիրված հնադարանների պահպանությունն ու ճոխացումը: Այս դժվար և միևնույն ժամանակ բարձր կուլտուրական նպատակը, որ բացի համամարդկային նշանակություն ունենալուց՝ նշանակալից է և հայ կուլտուրայի համար, ես համոզված եմ, հասարակության կողմից եռանդուն համակրություն ու ջերմ աջակցություն կստանա»[2]:

Վերոհիշյալ ընկերությունն ստեղծվեց 1914 թ. Մոսկվայի Լազարյան ճեմարանի հովանու տակ, մի խումբ հայ նշանավոր գործիչների կողմից՝ Ալ. Մյասնիկյան, Հ. Գևորգյան, Ալ. Ջիվելեգով, Գ. Յակուլով, Ա. Բուդաղյան: Մ. Սարյանն այդ ընկերության հիմնադիրներից ու ակտիվ գործիչներից էր: Այդ տարվա՝ 1914 թ., Սարյանը մեկնեց Թիֆլիս, այնտեղից՝ Երևան, որպեսզի տեղում կազմակերպի հայկական հուշարձանների պահպանության գործը: Իր կատարած ճամփորդության տպավորությունների մասին նա 1914 թ. հունիսին գրում է նկարիչ

---

[1] *«Նոր կյանք», 4.VIII.1907:*

[2] *Մ. Ս ա ր յ ա ն. Էջմիածնի տաճարի ռեստավրացիայի առիթով.– «Մշակ», 1.II.1914:*

և բանաստեղծ Մաքսիմիլիան Վոլոշինին. «Իսկ հին արվեստն այստեղ այնքան ապշեցուցիչ է և գրավիչ, որ դրա ուսումնասիրությունը վիթխարի հեղաշրջում կբերի արվեստի պատմության մեջ»[3]:

Սակայն դաժան իրականությանն իր ուղղումները մտցրեց հայ մտավորականների ծրագրերի մեջ: Հուշարձանների պահպանության ընկերության անդրանիկ ժողովը պետք է կայանար 1915 թ. ապրիլի 24-ին...

Իր երկար և բեղմնավոր կյանքի ընթացքում Մարտիրոս Սարյանը երբեք երես չդարձրեց մեր փառավոր անցյալի վկաներից թե՛ որպես հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահ, թե՛ որպես հեղինակություն վայելող մտավորական: Նա գործեց, գրեց, դիմեց, բողոքեց թե՛ հայ ժողովրդի հավատարիմ բարեկամներին, թե՛ երդվյալ թշնամիներին՝ կարևոր և անհետաձգելի համարելով հայկական հուշարձանների պահպանության գործը, դրանք լինեին Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի, թե Ռուսաստանի տարածքում: Մարտիրոս Սարյանը չխորշեց անգամ դիմել Բերիային, Ալիևին, Հուսեյնովին, Բրեժնևին, քանի որ ուրիշ միջոց չէր տեսնում՝ գոնե չլռել և շարունակել պայքարը: Համենայն դեպս, երկու հայկական եկեղեցիների՝ Երևանի Ս. Զորավորի և Դոնի-Ռոստովի Ս. Խաչի, փրկությունը կապված է Մարտիրոս Սարյանի անվան հետ:

Տարբեր տարիներին գրված նամակներում Սարյանն ի հայտ է բերում հայկական պատմական հուշարձանների խոր իմացություն, ինչը նա ձեռք էր բերել ոչ միայն իրազեկ լինելով գիտական դրականությանը, այլև շնորհիվ բազում ճամփորդությունների ժամանակ արած մանրազնին ուսումնասիրությունների:

Պատմությունն ու ժամանակը հաստատում են այն իրողությունը, որ հայկական հուշարձանների պահպանության խնդիրն ու Հայկական հարցը իրար հետ սերտորեն կապված են: Ղարաբաղի տարածքում գտնվող հուշարձանները, այգ թվում և Գանձասարը, հնարավոր եղավ փրկել միայն Ղարաբաղի ներկա կարգավիճակի շնորհիվ: Հիշենք 1988 թ. Նախիջևանի տարածքում հին Ջուղայի հազարավոր հրաշալի խաչքարերի բարբարոսական ոչնչացումը:

Ստորև հրապարակվող Սարյանի անտիպ (բացառությամբ № 9-ի) նամակների ընտրանին[4] մեկ անգամ ևս ապացուցում է այն ճշմարտությունը, որ լինելով մեծ հայրենասեր նա միշտ նվիրված է եղել հայկական պատմական հուշարձանների պահպանության սուրբ գործին:

ՌՈՒԶԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

---

[3] Մ. Ս ա ր յ ա ն. Նամակներ. հ. I, Երևան, 2002, էջ 156:

[4] Բոլոր նամակները թարգմանված են ռուսերենից, բացառությամբ № 2-ի:

–1–

ՌՈՒԲԵՆ ԴՐԱՄԲՅԱՆԻՆ[1]

3.07.1936 թ.
Մոսկվա

Սիրելի Ռուբեն Գրիգորևիչ.

Կատալոգը ես ուղարկել եմ Ձեզ: Ցուցահանդեսը փակվեց VI ամսի 26-ին: Այն ուղարկվեց Լենինգրադ: Այնտեղ կբացվի հուլիսի 16-ին, Գեղարվեստի Ակադեմիայի շենքում[2]:

Ցուցահանդեսը մեծ հաջողություն ունեցավ, նկարիչների և մյուսների սրտերում մեծ ուրախություն առաջացավ:

[...]

Հինգ օր հետո երևի կմեկնեմ Լենինգրադ: Չգիտեմ, որքան եմ այնտեղ մնալու:

Այստեղ հանդիպեցի Հովսեփ Աբգարովիչին[3] և Տրևերին[4]: Նրանք մեկնում էին Հայաստան, բայց Օրբելին պետք է վերադառնա Լենինգրադ, և մենք այնտեղ կհանդիպենք: Օրբելին պեղումներ է կատարելու Ամբերդում, Դվինում և այլուր:

Վաղուց ժամանակն էր այդ գործով զբաղվելու: Բայց ես չգիտեմ, թե ինչպես են վարվելու պեղումների արդյունքների հետ՝ այդ ամենը արտահանվելո՞ւ է, թե ցուցադրվելու է պեղումների տեղում կամ Երևանի թանգարանում:

Հովսեփ Աբգարովիչը դեմ է Գառնիի տաճարի վերականգնմանը[5]: Իսկ ես կարծում եմ, եթե լավ արվի, ապա անհրաժեշտ է վերականգնել, այդ բանը համաշխարհային նշանակություն ունի:

Առհասարակ, Հայաստանը համաշխարհային երկիր է, նրա մշակույթը շատ բարձր է: Ճիշտ է, հիմիկվա հայերը անարժան ժառանգներն են այդ ամենի, բայց գուցե, հանուն իրենց «բարձր» անձի, ավելի սիրով կվերաբերվեն անցյալի հիանալի հուշարձաններին [...]

Դուք պահպանո՞ւմ եք Սվիրինին[6]: Այստեղ բոլորը նրա մասին են հարցնում և նրան շնորհավորում[7]: Սենյակի հարցը ի՞նչ վիճակում է: Հա-

---

[1] *Դրամբյան Ռուբեն Գրիգորի (1891–1991) – արվեստաբան, թանգարանային գործիչ, Հայաստանի Պետական պատկերասրահի տնօրեն (1925–1951 թթ.):*

[2] *Ակնարկվում է Մ. Սարյանի անհատական ցուցահանդեսը, որը 1936 թ. հունիսի 7-ին բացվեց Մոսկվայի Կերպարվեստի պետական թանգարանում (այժմ՝ Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարան), իսկ հուլիսին փոխադրվեց Լենինգրադի համամիութենական գեղարվեստի ակադեմիա: Մոսկվայում ներկայացվեցին Սարյանի 270 աշխատանք, Լենինգրադում 300:*

[3] *Օրբելի Հովսեփ (Իոսիֆ) Արգարի (1887–1961) – արևելագետ, հնագետ, հասարակական գործիչ, ՀԽԱՀ ԳԱ առաջին պրեզիդենտը (1943–1944), Պետական էրմիտաժի տնօրեն (1934–1951):*

[4] *Տրևեր Կամիլլա Վասիլևնա (1892–1974) – պատմաբան, արևելագետ, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ:*

[5] *Խոսքը Գառնիի ավերված հեթանոսական տաճարի (I–IIդդ.) մասին է, որի վերակառուցման հերթական նախագծով 1933 թ. հանդես եկավ ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանը:*

[6] *Արվեստաբան Ալեքսանդր Նիկոլաևիչ Սվիրինը (1886–1976) 1936 թ. գարնան և ամռան ամիսներն անց է կացրել Հայաստանում՝ աշխատելով «Հին Հայաստանի մանրանկարչությունը» մենագրության վրա, որը լույս տեսավ Մոսկվայում 1939 թ.:*

[7] *Նկատի ունի Սվիրինի 50-ամյակը:*

վանաբար, նրան սենյակ չեն տվել: Ամոթ և խայտառակություն: Անսպառ թվով մարդիկ են ցանկանում Հայաստան գալ, այն, ըստ իմ աշխատանքների, թվում է ավետյաց երկիր, հիանալի դրախտ: Վատ ագիտացիա եմ անում իմ հայրենիքի համար:

Իմ ցուցահանդեսի փակման օրը կայացավ ստեղծագործական երեկո[8], ես նույնպես ելույթ ունեցա, բոլորը գոհ մնացին իմ ելույթից:

Դուք ոչինչ չեք գրում: Տեսա Դորիչինային[9], Ձեզ բարևում է: Լենինգրադից հետո հնարավոր է գնամ Կիև[10], այնուհետև՝ տուն:

Ողջույն:

Ռ. Դրամբյանի ընտանեկան արխիվ:

–2–

ՀՈՎՍԵՓ ԿՈՒՍԻԿՅԱՆԻՆ[11]

24.11.1937 թ.
Մոսկվա

Սիրելի Հովսեփ

Ես մի անդամ գրել էի, բայց դու այստեղ չէիր, գնացել էիր Երևան դասախոսությունների համար, ինձ պատասխանեց Գոհարիկը: Ուրեմն քեզ հայտնում եմ, որ ես գտնվում եմ հոս, Մոսկովում, ինչպես ասում էին առաջ այսպես կոչված Նոր-Նախիջևանցիները, որոնք օրին մեկ օր Նախիջևան անունով քաղաք ունեին Դոն գետի ափերին, այժմ այդ քաղաքը միացված է Ռոստով քաղաքին և անունը վերացված, այդպես է գաղթական ժողովրդի պատմությունը:

Ես իրիկունները համարյա թե տանն եմ լինում, եթե չիմիլ չիլասնը[12], արի պատմիր ինչպես ես, լա՞վ ես:

[...]

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Հովսեփ Կուսիկյանի ֆ., №1046:

---

[8] Սարյանի ստեղծագործական երեկոն տեղի ունեցավ Կերպարվեստի կենտրոնական թանգարանում, նրա անհատական ցուցահանդեսի փակման օրը՝ հունիսի 26-ին: Երեկոյին նախագահում էր գրաֆիկ արվեստի տեսարան Վլադիմիր Անդրեևիչ Ֆավորսկին (1886-1964):

[9] Դորիչինա Նադեժդա Եվսեևնա (1884–1949) – Պետերբուրգի գեղարվեստական բյուրոյի հիմնադիր, ռուսական թանգարանի գիտաշխատող:

[10] Որոշում կայացվեց Սարյանի անհատական ցուցահանդեսը Կիև չտանել:

[11] Կուսիկյան Հովսեփ Կարապետի (1890–1964) – լեզվաբան, բանաստեղծ, մանկավարժ:

[12] Ի վիճակի լինես, կարողանաս (Նոր-Նախիջևանի բարբառ):

–3–

ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒՆ

4.09.1945 թ.
Երևան

Սիրելի Իոսիֆ Աբգարովիչ

Ստացա Ձեր հեռագիրը, շատ ուրախ եմ, որ Ձեզ, Կամիլլա Վասիլևնային և պատմությամբ ու մշակույթով տարված բազում այլ մարդկանց շատ ուրախացրեց այս հայտնագործությունը[13]: Սակայն դա միայն մի փոքր մասն է այն մեծի, որ ես հայտնագործեցի՝ Գառնի քաղաքի ավերակները:

Այսպես կոչված Բաշ Գառնի գյուղը կամ ինչպես հիմա են կոչում՝ Գառնին, ամենավերջին, նորագույն ժամանակներում տեղակայվել է հին քաղաք Գառնիի ավերակների վրա: Ես միայն զարմանում եմ, թե ինչպես է այս բանը վրիպել Ձեր, Ն. Յու. Մառի[14], Թորամանյանի[15] և ուրիշ մեծ մարդկանց ուշադրությունից: Ես դա բացատրում եմ հայտնի տաճարի զարմանալի գրավչությամբ, որ հապճեպ ուսումնասիրման համար շատ հարմար օբյեկտ է: Մինչդեռ ողջ քաղաքի տարածքը՝ քաղաքի նույնիսկ իր ընդգծված պատմական հատկանիշներով, վրիպել է անդամ Ն. Յ.-ի պես հանճարեղ մարդու աչքից, որն առաջինն այդքան հստակ ու որոշակի կերպով առաջ քաշեց մերձավոր Ասիայի ժողովուրդների՝ հիմնականում Հայաստանի, մշակույթի ուսումնասիրման հարցն ու նշանակությունը:

Հնադարյան քաղաքի ամենից առաջ աչքի ընկնող գլխավոր հատկանիշները երերույքի տիպի բազիլիկայի ավերակներն են, որի հիմքը, ընդ որում, ավելի հին ծագում ունի, [չինված է] ավելի խոշոր քարերից, ինչպես ամրոցն ու տաճարը, իսկ վերևից ավելի փոքր մեծության քարեր են, բայց ավելի գեղեցիկ տաշված և ցեխով (ցեմենտով) շարված: Բազիլիկայի ավերակների մնացորդներն այնքան լավ են պահպանվել, որ շատ հեշտ է պարզել դրա բնույթը, գուցե նաև ժամանակաշրջանը:

Գյուղական եկեղեցին, որն ինչպես հիմա ընդունված է, վեր է ածվել կոլխոզային պահեստի, անշուշտ կառուցված է հնագույն շինության ավերակների վրա: Դրա կողքին մի հրաշալի խաչքար կա, կարծեմ XII դ., և՝ ինչպես ընդունված է, եկեղեցու շուրջբոլոր տապանաքարեր կան, դամբարանների ակնհայտ հետքեր, նաև նորագույն ժամանակների ոչ հետաքր-

---

[13] *1945 թ. Գառնիում Մ. Սարյանը և բուսաբան Կ. Դավթյանը տեղի գերեզմանոցում հայտնաբերում են մի սրբատաշ քար հունական արձանագրությամբ: Պարզվում է, որ դա Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 90-րդ գլխում հիշատակվող Տրդատ I Թագավորի հայերեն բառերով, բայց «հելլենական գրերով» արված արձանագրությունն է՝ «Արև. Տրդատ Արքա Մեծն Հայաստանի»:*

[14] *Մառ Նիկոլայ Յակովլևիչ (1864–1934) – արևելագետ, հայագետ, հնագետ, ակադեմիկոս:*

[15] *Թորամանյան Թորոս Հարությունի (1864–1934) – ճարտարապետ, հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր: 1909–1911 թթ. պեղել ու բացել է Գառնիի հեթանոսական տաճարի ավերակները: Բայց չի զբաղվել Գառնիի ամրոցի և հին բնակավայրի պեղումներով: Գառնիի կանոնավոր պեղումները ձեռնարկվեցին միայն 1949 թ. ՀՍՍՀ ԳԱ հնագիտական արշավախմբի կողմից, պատմաբան, հնագետ Բարկեն Նիկոլայի Առաքելյանի ղեկավարությամբ: Այն, ինչ հայտնաբերվեց այդ պեղումների ժամանակ, ամբողջապես հաստատեց Մ. Սարյանի դեռևս 1945 թ. արված կանխագուշակումները Գառնիի՝ որպես հնագույն բնակավայր լինելու մասին:*

քիր խաչքարեր և Գառնիի տաճարից բերված զարդաքանդակներով մեծածավալ քարեր:

Մի երկու հարյուր քայլի վրա կա մի հողածածկ մեծ բլուր, շատ հին ծագում ունեցող, բլրի հարավային մասում գերեզմանոց է, գերեզմանաքարերը հազիվ են երևում, բլրի այդ մասը ծառայում է որպես կալսատուն, պահպանվել են և մատուռի մնացորդները, որը կառուցված է եղել բազալտե մեծ սալաքարերի վրա, հնարավոր է, որ սա հայտնի մարդկանց դամբարան է: Բլրից ցած՝ կա մի մեծ հրապարակ, ուր գերեզմանոց է, որտեղ այժմ էլ են թաղումներ կատարվում: Այստեղ կան ամեն տեսակի խաչքարեր, ճիշտ է դրանք թվով շատ չեն, բայց քարերն այստեղ բերված են ամբոցից և տաճարից, գուցե և ուրիշ կառույցներից, ինչքան ուզես, հենց այստեղ ես՝ Ցոլակ Դավթյանի[16] հետ, հայտնաբերեցի հունական գրությունը:

Այստեղ կան քիվերի, մակագրություններով խաչքարերի ֆրագմենտներ, զարդաքանդակներով քարեր և երկաթե ամրակապերով քարե որմնախորշեր, շատերի վրա պահպանվել են երկաթի կտորներ և կապարի մնացորդներ: Գյուղում և դրա շրջակայքում մնացել են մատուռների մնացորդներ, ձիթհանքի (նշմարվող) հետքեր, իսկ որոշ գյուղական կառույցներում աչքի են զարնում շատ պրիմիտիվ ձևով օգտագործված հին քարեր: Ընդհանուր առմամբ, քարերը մի տեղից մյուսն են տեղափոխվել և տարբեր ժամանակներում օգտագործվել տարբեր նպատակներով, գուցե և նրանց մի մասն օգտագործվել է հենց նույն տեղերում. այս ամենը բերեց ինձ այն եզրակացության, որ դա մեծ քաղաքի հրապարակ է եղել, և ավերածություններից հետո տարբեր ժամանակներում այստեղ նոր կյանք է ծագել, նոր կյանքի պահանջներից ելնելով մարդիկ նորովի են օգտագործել այս ամբողջ «շինանյութը»:

Խնդրի առարկան՝ նյութական մշակույթի հրաշալի հուշարձանն է, և դրա պերճախոսությանը սահման չկա, գյուղն ավելի մանրամասն ուսումնասիրելուց հետո ես կարող եմ ամենայն համոզվածությամբ ասել, որ ոչ մի նոր քար այնտեղ չկա, ոչ միայն մշակված, այլև չմշակված քարերն էլ մշտապես օգտագործվել են առօրյայում:

Նույնիսկ պատերազմի այս չորս տարիների ընթացքում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ. կոլխոզնիկների մի մասը թողել է գյուղը, փոխադրվել ավելի լավ, նոր վայրեր, իր հետ տանելով շինությունների բոլոր փայտյա մասերը: Այս հանգամանքը նույնպես հեշտացնում է, անկասկած, համաշխարհային նշանակություն ունեցող այս հուշարձանի թե՛ պահպանությունն ու ուսումնասիրումը, թե՛ դրա օգտագործումը:

Այս ամենից ես եզրակացնում եմ. ապագա 1946 թ. դրամական մեծ հատկացում ստանալ, միջոցներ հատկացնել, Գառնիի գործը դնել այնպիսի մի բարձունքի վրա, որ պետության բոլոր կապիտալ ներդրումները ոչ միայն ետ բերվեն և արված աշխատանքները ոչ միայն պատիվ բերեն խորհրդային գիտությանը, այլև որ Գառնին իր մշտական եկամուտներով կարողանա ինքն իրեն պահել:

---

[16] *Խոսքը բուսաբան Ց. Դավթյանի (1911–1994) մասին է:*

Առաջին փուլում անհրաժեշտ է անհապաղ կերպով այս տարի (սեպտեմբեր–հոկտեմբեր) Գառնի գործուղել հեղինակավոր (լրջմիտ) էքսպեդիցիա, որը գոնե մոտավորապես պարզի, թե որտեղ ինչ կա և թե ինչպե՞ս եկող տարի կազմակերպել պեղումների մշտական աշխատանքը, որը շատ ու շատ տարիներ կպահանջի:

Խորապես համոզված եմ, որ էրմիտաժը բնության գրկում ոչ պակաս արժեքավոր է, քան հոյակապ պալատի դահլիճներում տեղակայված Էրմիտաժը, և ոչ ոք Ձեզնից բացի չի կարող այս գործը կազմակերպել:

Եվ եթե ամրոցի տարածքը չօտարացվի, հնարավոր չի լինի կազմակերպել հուշարձանի պահպանությունը: Այս տարածքի օտարացման դեպքում, առաջին շրջանում կարելի է որոշակի վճարի դիմաց կազմակերպել տաճարի և հարակից հրապարակի այցելությունը, իսկ հետագայում այստեղ կհավաքագրվի այն ամենը, ինչ ցրված է մեծ տարածք զբաղեցնող քաղաքի ավերված մասերում: Դա հնարավորություն կտա պահել էքսկուրսավարներ և պահակներ, ամեն ինչ պետք է անել շտապ, նկատի ունենալով, որ այցելուները ջարդում են հուշաքարերի մասերը և տանում իրենց հետ, շատ մասունքներ, որ մենք Ձեզ հետ տեսել էինք, արդեն ոչնչացված են և անդարձ կորսված:

Խորապես համոզված եմ, որ գուք չեք ափսոսի ծախսել Ձեր անհատնում էներգիայի մի մասը այս մեծ մշակութային գործի շտապ կազմակերպման վրա, իսկ ժողովուրդը երբեք չի մոռանում իր մշակույթի և վառքի համար մարտնչող լավագույն զավակներին:

Ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը:

Ողջույն Կամիլլա Վասիլենային:

Մարտիրոս Սարյան

Մ. Սարյանի ընտանեկան արխիվ:

–4–

ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒՆ

15.06.1946 թ.
Մոսկվա

Սիրելի Հովսեփ Աբգարովիչ

Իմ ցանկությունը՝ գալ Լենինգրադ, հանդիպել Ձեզ հետ և տեսնել Էրմիտաժը, չկայացավ մի քանի պատճառներով, որոնցից գլխավորն իմ վատառողջ լինելն է: Մինչև օրս ես Մոսկվայում եմ:

Գոնե նամակի ձևով չեմ կարող Ձեզ հետ չկիսվել իմ նվիրական մտքերով, որոնք վերջին շրջանում ինձ համար տանջանք են դարձել: Դա Հայաստանի նյութական մշակույթի մնացորդների հետագա ճակատագրի հարցն է՝ տարբեր դարաշրջանների դասական մշակույթի այն մնացորդների, որոնք իրենցից ներկայացնում են ոչ մեկին պիտանի «աղբի» կույտ:

25 տարիների ընթացքում իրագործվել է մեր պատմության իրեղեն ապացույցների պահպանումը վերջնական կործանումից: Դուք գիտեք, թե ինչքան բան արդեն անվերադարձ կործանվել է:

Տգետ մարդիկ առանց որևիցե խղճի խայթի ոչնչացնում են դրանք: Ի՞նչ կարելի է նրանցից սպասել: Տգիտությունը միշտ մնում է տգիտություն: Ես ավելի քան վստահ եմ, որ եթե Ձեր եռանդը և անհատնում էներգիան ծախսվեն այս գործի վրա, ապա գիտության և արվեստի ողջ աշխարհը կհարստանար բազմաթիվ նոր հայտնագործություններով, գետնի տակից ամեն մի նոր առարկայի, նոր ցուցանմուշի հայտնությունն ավելի բարձրաձայն կհնչեր ամբողջ աշխարհով մեկ, իսկ Ձեր անունը կդասվեր մեր ժողովրդի և ողջ մարդկության մեծագույն անունների շարքում: Դուք կբացահայտեիք մի հրաշալի աշխարհ՝ դասական գեղեցկության մոռացված աշխարհն այն հերոսական ժողովրդի, որի զավակն եք և Դուք: Կարելի՞ է արդյոք հանդուրժել ներկա դրությունը հետագայում ևս: Ավելի խորը մտածեք, դիմեք կրքով լի Ձեր սրտին: Ես դիմում եմ Ձեր այդ սրտին, որը ես զգացի 1929 թ. Ախուրյանի հին, քարքարոտ ափերով ճամփորդելիս՝ Դուք, Կամիլլա Վասիլևնան և ես: Թուրքիային անցած Ախուրյանի հակառակ ափին փռված էին Ձեր սրտին այնքան բան ասող Անիի ավերակները: Դուք չդիմացաք և երեխայի պես սկսեցիք հեկեկալ[17]: Այդ ցավը զգացինք և մենք: Այն համահունչ էր և մեր սրտերին: Այն իմ մոտ վերքի վերածվեց:

Սիրելի Իոսիֆ Աբգարովիչ: Դուք տարված եք Էրմիտաժի հարուստ հավաքածուներով և պալատի սքանչելի դահլիճներով, բայց մի՞թե դա Ձեզ իրավունք է տալիս մոռանալ Գառնիի հիասքանչ բնապատկերը, որ պալատներից ավելի վեհ է ու հիանալի, ուր ճակատագրի բերումով կուտակվել են այլ բնույթի թանգարանային արժեքներ, որոնք կարիք ունեն մի այլ տեսակի ցուցադրման:

Աշխարհը կգա, կտեսնի ու կզարմանա մեր նախնիների ստեղծագործական թափով ու վեհությամբ:

Սիրելի Իոսիֆ Աբգարովիչ, փորձեք գուբս պրծնել և մոտակա ամսին գալ Հայաստան: Եկեք կազմակերպենք Գառնիի Էրմիտաժը, ժամանակը չի համբերում, կսպասեմ Ձեզ: Գրկում ամուր, համբուրում եմ Ձեզ:

Մ. Սարյանի ընտանեկան արխիվ:

---

[17] Սկսած 1906 թ. Հ. Օրբելին մասնակցել է Անիի բոլոր պեղումներին՝ իր գործուն մասնակցությունը բերելով Անիի թանգարանի ստեղծմանը, եղել է այդ թանգարանի վարիչը: Այսօր նրա աշխատասիրությամբ ստեղծված թանգարանի ցուցանմուշների մանրազնին նկարագրությունը ժամանակին այնտեղ հավաքված մասունքների հնագիտական, պատմական և հայագիտական բարձր արժեքի միակ վկայությունն է: Անիի ինստիտուտը և թանգարանը բարբարոսաբար ոչնչացվեցին թուրքերի կողմից՝ Անիի գրավման ժամանակ: Հնարավոր եղավ փրկել մասունքների միայն չնչին մասը և արձանագրությունների հետ առնչվող շատ կարևոր նյութեր:

–5–

ԼԱՎՐԵՆՏԻ ԲԵՐԻԱՅԻՆ[18]

30.07.1946 թ.
Մոսկվա

Մեծարգո Լավրենտի Պավլովիչ

Ձեզ քաջ հայտնի է Մերձավոր Արևելքի հնագույն երկրների՝ Հայաստանի և Վրաստանի նյութական մշակույթի հուշարձանների պատմագեղագիտական նշանակությունը: Միայն Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո մարդկության պատմության և մշակույթի համար վիթխարի նշանակություն ունեցող այդ հուշարձանների ուսումնասիրումն ու պահպանումը դրվեց պատշաճ մակարդակի վրա:

Անհրաժեշտ փոխադրամիջոցների բացակայությունը չափազանց դժվարեցնում է կոմիտեի աշխատանքները՝ ուղղված հուշարձանների ուսումնասիրմանը և պահպանությանը:

Համոզիչ կերպով խնդրում եմ Ձեզ համապատասխան կարգադրություն անել, որպեսզի Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեին հատկացվեն հայրենական արտադրության երկու ավտոմեքենա, իրենց անհրաժեշտ պահեստամասերով:

ՍՍՀՄ Գերագույն Սովետի դեպուտատ,
Ստալինյան մրցանակի դափնեկիր,
ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ՝ Մ. Սարյան:

Մ. Սարյանի ընտանեկան արխիվ:

–6–

ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ[19]

29.08.1946 թ.
Երևան

Մեծարգո Սերգեյ Գրիգորևիչ

Այսպես ուրեմն. Բարվիխայից Ձեր մեկնելուց հետո ամեն ինչ հին հունով ընթացավ, միայն այն տարբերությամբ, որ մեկը փոխարինում էր մյուսին: Կոշտոյանցը Ձեզանից հետո շուտով մեկնեց: Մինչև այդտեղից գնալը, ես հաճախ էի հանդիպում Սերգեյ Ստեպանովիչի[20] հետ և նույնիսկ մեկ անգամ նրա հետ միասին հյուրընկալվեցինք Անաստաս Իվանովիչի[21] մոտ: Իհարկե, ես նրան ոչինչ չասացի մեքենաների մասին, որոնց համար

---

[18] *Բերիա Լավրենտի Պավլովիչ (1899–1953) – պետական, կուսակցական գործիչ, անհատի պաշտամունքի տարիներին խորհրդային պատժիչ մեքենայի ղեկավար:*

[19] *Ինքնությունը մեզ անհայտ է:*

[20] *Շահումյան Սերգեյ Ստեփանի (1914–1977) – պատմաբան, մանկավարժ, Ստեփան Շահումյանի որդին:*

[21] *Միկոյան Անաստաս Հովհաննեսի (Իվանի) (1895-1978) – 1946–1955 թթ. ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ:*

գրել էի Լ. Պ. Բերիային[22]: Ձեր խորհրդով և մինչև հիմա ոչ մի պատասխան չեմ ստացել: Չգիտեմ, թե դա ինչին վերագրել: Տեղյակ եմ պահում Ձեզ, գուցե առիթ ունենաք հարկ եղած տեղը հարց ու փորձ անելու, թե ինչ վիճակում է իմ ուղերձը կամ գուցե նպաստեք այդ հարցի լուծմանը:

Բարվիխայից վերադարձա 22-ին, իսկ 27-ին դուրս եկա դեպի Երևան: Ինձ, որպես պատգամավորի[23], տարբեր հարցերով դիմում են իմ ընտրողները. ես փորձում եմ հնարավորության սահմաններում օգնել նրանց: Մեքենայի խնդիրը Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեի համար հույժ կարևոր է: Ես չգիտեմ ինչ անել, այնքան դժվար է մարդկանց համոզել երբեմն տարրական բաներում: Հայաստանն ունեցել է վիթխարի դասական մշակույթ: Այդ տեսակետից նա առաջին տեղն է գրավում Սովետական Միությունում, նրա հետ ոչ ոք չի կարող մրցել: Համաշխարհային մասշտաբով այն կարող է դասվել Հռոմի և Հունաստանի կողքին: Այդ մասին են վկայում մեծաքանակ հուշարձանների մնացորդները Սովետական Հայաստանի ոչ մեծ՝ Հայաստանի ընդամենը մեկ տասներորդ մասը կազմող պատառիկի վրա՝ ընդհանուր առմամբ գրանցված է ավելի քան երեք հազար ճարտարապետական հուշարձան:

Դուք գործունյա մարդ եք, Ձեզ համար գուցե ձանձրալի կլինի կարդալ իմ այս տողերը մեր ժողովրդի մեծ անցյալի վերաբերյալ, որի ուսումնասիրմանը ձեռնամուխ եղան, այն էլ շատ վատ, միայն Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո:

Մ. Սարյանի ընտանեկան արխիվ:

—7—

ԿԱՄԻԼԼԱ ՏՐԵՎԵՐԻՆ

27.10.1953 թ.
Երևան

Մեծարգո Կամիլլա Վասիլևնա

Ստացա Ձեր ուղարկած հրաշալի գիրքը՝ «Ակնարկներ Հին Հայաստանի մշակույթի պատմության»: Խորին շնորհակալություն:

Հինգ օր առաջ ես գնացել էի Դվին, այնտեղից Արարատը նկարելու[24]: Բացառիկ գեղեցիկ, արևոտ, պարզ օր էր՝ վերջերս տեղացած լավ անձրևներից հետո:

Այդ քաղաքի շինարարները իսկական բանաստեղծներ են եղել, ընտրելով հարթավայրի այդ բլուրը, որը Արարատի հովանու ներքո շրջապատված է զարմանահրաշ բազմաձև, բազմագույն լեռներով ու գագաթներով:

Բնության հրաշալի արարչագործությունը՝ լեռնային այդ թանկարժեք օղակը, բացառիկ գեղեցիկ էր այդ օրը: Հարավում այն զարդարված էր ա-

---

[22] Տե՛ս նամակ 5:

[23] 1946 թ. նոյեմբերին Մ. Սարյանն ընտրվեց ԽՍՀՄ Գերագույն սովետի II գումարման դեպուտատ:

[24] Խոսքը, հավանաբար, «Սիս-Մասիս» (1953, կտ. յուղ. 48X68: Մոսկվա, Հ. Հարությունյանի հավաքածու) աշխատանքի մասին է:

մենաթանկարժեք քարով աշնանային արևի տակ կայծկլտող Սիս-Մասիսով, ինչպես հայ ժողովուրդն է անվանում փառահեղ Արարատը:

Ես շշմած էի բնության այդ հեքիաթային գեղեցկությունից: Դա շատ հազվադեպ է պատահում, ես իմ կյանքում առաջին անգամն էի հաղորդակցվում երկրի այդպիսի գեղեցկության հետ, դրանից հնարավոր չէր կտրվել: Նայելով Դվինի հետաքրքրագույն ավերակներին, հիշելով Հայաստանի բազմաթիվ հուշարձանները, որոնք որպես կանոն միշտ տեղադրված են բանաստեղծական վայրերում և օրգանապես կապված են բնության հետ, ես, ասես քաղցր քնից արթնացած, հիշեցի իմ պանծալի բարեկամներին՝ Ձեզ և Իոսիֆ Աբգարովիչին[25]... Ինչ-որ սև ձեռք Ձեզ հեռացրել է դրանցից...

Թույլատրելի՞ է արդյոք, որ Ձեր նկարագրած դարաշրջանի հուշարձանները, ինչպես և քրիստոնեական շրջանի հուշարձանները, որոնք օրգանապես կապված են իրար, քանի որ արարողը եղել է մեկ վարպետ ժողովուրդը, գտնվեն այսքան անխնամ վիճակում: Հուշարձաններ, որոնք մտել են մարդկության համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Մեզանում, անշուշտ, ինչ-ինչ բաներ արվում են, բայց դրանք չնչին են այդ հուշարձանների նշանակալիության համեմատ:

Ինչպես էլ լինի, ինչ էլ խանգարի, ես պարտադիր եմ համարում Ձեր ամենամյա այցը Հայաստան. անհրաժեշտ է ղեկավարել, ճիշտ ուղղություն տալ ամբողջ աշխատանքին, մանավանդ այստեղ են Ձեր աշակերտները, նրանք Ձեզ սիրում են և աշխատում են ազնվորեն:

Եվս մեկ անգամ Ձեր գրքի մասին. այն սուր է, պարզ, թեթև կարդացվող, մատչելի ուզածդ ընթերցողի համար: Լիովին կիսում եմ Ձեր միտքը «հելլենիզմի» մասին[26]: Ձեր աշխատությունը սոսկ գեղեցիկ սկիզբ է, պետք է այն շարունակել ամենաեռանդուն կերպով: Իոսիֆ Աբգարովիչի իմաստուն ղեկավարությամբ մենք կտեսնենք մշակույթին վերաբերող ճշմարտության նոր էջեր, մշակույթ, որով զբաղվել են պատահական բուրժուական գիտնականներ[27]:

Ջերմորեն ողջունում եմ Ձեզ և Իոսիֆ Աբգարովիչին:

Խորին սիրո զգացումով՝

Մարտիրոս Սարյան

Մ. Սարյանի ընտանեկան արխիվ:

---

[25] Խոսքը Իոսիֆ Աբգարովիչ Օրբելիի մասին է:

[26] Հանգամանորեն վերլուծելով «հելլենիզմ» տերմինը, Կ. Տրևերը հանգում է այն եզրակացության, որ հելլենիստական շրջանում Արևելքի մի շարք երկրների մշակույթների ինքնությունը շարունակում էր պահպանվել և զարգանալ: Այսպես. «Հին Հայկական մշակույթը ստեղծագործաբար յուրացնելով հելլենիստական արվեստի առանձնահատկությունները, իր ուրույն նվաճումներով և բարձր մակարդակով չէր զիջում հարևան հելլենիստական պետությունների մշակույթներին (Կ. Տ ր և ե ր. նշվ. աշխ., էջ 19)»: Նամակից երևում է, որ Մ. Սարյանը լիովին կիսում է Կ. Տրևերի այս տեսակետը:

[27] Գառնիի ամրոցը այցելել, հետազոտել և նկարագրել են օտարերկրյա ճանապարհորդներ Ռ. Կեր-Պոտերը, Դյուրուա գը Մոնպերյոն, Ն. Ա. Մուրավյովը, Ա. Ս. Ուվարովը, Վ. Ն. Սիսուևը և Ց. Ի. Սմիռնովը: Գառնիով զբաղել է նաև Ն. Ց. Մառը, բայց, իմանալով Սարյանի հարգալից վերաբերմունքը նրա վաստակի հանդեպ, բացառվում է Մառին այս ցուցակի մեջ, որպես «պատահական բուրժուական գիտնական» ընդգրկելը:

–8–

ՄԻՔԱՅԻԼ ՀՈՒՍԵՅՆՈՎԻՆ

ԱԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի
հնությունների պահպանության գիտա-
մեթոդական խորհրդի նախագահ պրոֆ.
Մ. Ա. Հուսեյնովին
<Անթվակիր>

Մեծարգո Միքայիլ Ալեսքերովիչ

Պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերության հասցեով ստացվում են բանավոր և գրավոր դիմումներ Նախիջևանի ԻԽՄ և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում գտնվող պատմա-ճարտարապետական հուշարձանների անմխիթար վիճակի մասին: Հայկական ճարտարապետության այնպիսի կարևոր հուշարձաններ, ինչպիսիք են Կարմիր վանքը (Կզլ վանք), Գանձասարի վանքը, Ծիծեռնավանքը և ուրիշներ, պատշաճ կերպով չեն պահպանվում, գտնվում են բարձիթողի վիճակում, բնավ չեն տարվում պրոֆիլակտիկ աշխատանքներ՝ քայքայման պրոցեսները կանխելու համար:

Ջուղա գյուղի (Արաքսի ափին) մոտ գտնվող գերեզմանատանը, որտեղ կենտրոնացված են մի քանի հազար խաչքարեր, գրանցվել են դրանց վնասման և շինարարական նպատակներով օգտագործման դեպքեր: Մասամբ այդպես են վարվում Թարգմանչաց վանքի և ԱԽՍՀ-ի Դաշքեսանի շրջանի Քուշչի (նախկինում՝ Խաչավան) գյուղի տարածքում գտնվող բերդի հետ, որոնց առանձին մասերը տարվում են շինարարական աշխատանքների համար:

Ձեր ուշադրությունը հրավիրելով վերը շարադրվածի վրա և նկատի ունենալով այն, որ կենտրոնական մամուլը վերջին երկու տարիների ընթացքում ամենայն վճռականությամբ առաջ է քաշում հուշարձանների պահպանության գործի բարելավման հետ կապված հարցեր, Պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերության ղեկավարությունը խնդրում է Ձեզ դիմել համապատասխան պետական օրգաններին, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն ԱԽՍՀ-ի տարածքում գտնվող հայկական պատմա-ճարտարապետական հուշարձանների պահպանությունը բարելավելու ուղղությամբ:

Միաժամանակ խնդրում եմ Ձեզ համապատասխան նախագծային կազմակերպությունների միջոցով պարզել, թե Նախիջևանի ԻԽՍՀ-ում Արաքս գետի վրա կառուցվող ամբարտակը ինչքանո՞վ է սպառնում ջրի տակ մնացող տարածքում գտնվող պատմաճարտարապետական հուշարձաններին և հայտնել մեզ, որպեսզի հարց բարձրացնենք դրանք գրանցելու կամ փրկելու:

Հավելված՝ երկու ֆոտո վավերագիր, որոնք փաստում են Ջուղա գյուղի գերեզմանոցի խաչքարերի կոտրելն ու որպես շինանյութ օգտագործելը[28]:

Հանրապետական խորհրդի նախագահ,
ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ,
ԽՍՀՄ-ի Գեղանկարչական ակադեմիայի անդամ,
Սոցիալիստական աշխատանքի հերոս
Մ. Սարյան

Մ. Սարյանի ընտանեկան արխիվ:

–9–

ԼԵՈՆԻԴ ԲՐԵԺՆԵՎԻՆ

22.01.1968 թ.
Երևան

Մեծարգո Լեոնիդ Իլյիչ

Մոտ օրերս լրանում է իմ 88 տարին և նախքան այս աշխարհից հեռանալը ցանկություն ունեմ ոտք դնել այն հողի վրա, որտեղից դուրս են եկել իմ նախնիները:

Դրանք միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի ավերակներն են, որոնք գտնվում են Թուրքիայի հետ սահման կազմող Ախուրյան գետի հանդիպակաց ափին: Դա համաշխարհային նշանակության ճարտարապետական այդ հուշարձանը, իմ ժողովրդի հպարտությունն է և սեփականությունը: Հինգ քառակուսի կիլոմետր տարածքը, որը զբաղեցնում են Անի քաղաքի ավերակները, մեծ չէ, բայց այդ փոքր հողակտորը հանդիսանում է Հայաստանի սրբավայրը:

Ես ողջ ժողովրդի անունից, ողջ քաղաքակիրթ մարդկության անունից խնդրում եմ Ձեզ, վերադարձրեք Անին մայր հայրենիքի գիրկը, թույլ միք տա նրան վերջնականապես անհետանալ օտարերկրյա տիրապետության հարվածների տակ:

Փրկեցե՛ք Անին և շնորհակալ հայ ժողովուրդը ողջ աշխարհի առջև դարեդար կհատուցի Ձեզ խորին երախտագիտությամբ և հիացմունքով:

Մարտիրոս Սարյան
Սոցիալիստական աշխատանքի հերոս
ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ
Լենինյան մրցանակի դափնեկիր

Մ. Սարյանի ընտանեկան արխիվ:

---

[28] *1988 թ. խպառ ոչնչացվեցին և հողին հավասարվեցին Ջուղա գյուղի գերեզմանոցի բոլոր խաչքարերը (մինչև 1973 թ. գրանցված էր մոտ 2707 խաչքար, ամենահները՝ IX–X դդ.):*

–10–

ՀԵՅԴԱՐ ԱԼԻԵՎԻՆ[29]

Ադրբեջանի ԿԿ ԿԿ առաջին
քարտուղար ընկ. Հ. Ա. Ալիևին
1970, հունիս, Երևան

Հարգելի Հեյդար Ալիրզաևիչ

Սույն նամակս թելադրված է երկու հանգամանքներով: Նախ և առաջ ուզում եմ մաղթել Ձեզ նորանոր հաջողություններ Ձեր արդյունավետ գործունեության ընագավառում՝ ուղղված եղբայրական ադրբեջանական ժողովրդի տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի հետագա զարգացման գործընթացին: Ես անկեղծորեն, ի սրտե ցանկանում եմ, որ Ձեր ծրագրերն իրականանան կյանքում: Միաժամանակ ուզում եմ որոշ մտորումներ հայտնել՝ կապված Ադրբեջանական ԽՍՀ տարածքում գտնվող հայ ժողովրդի պատմական հուշարձանների պահպանման խնդրի հետ:

Լեռնային Ղարաբաղում, Նախիջևանի ԻԽՍՀ-ում, Շահումյանի գյուղշրջանում և հարևան տարածքներում գտնվում են հայ ժողովրդի ճակատագրում, նրա նյութական և հոգևոր մշակույթի զարգացման համար մեծ դեր խաղացած բազմաթիվ հուշարձաններ, ճարտարապետական գլուխգործոցներ: Բավական է հիշատակել Մարտունու շրջանում գտնվող Ամարասի վանքը, որը կառուցել է Գրիգոր Լուսավորիչը IV դ., և որը հետագայում արևելյան Անդրկովկասում դարձել է հոգևոր և մշակութային խոշոր կենտրոն, Հադրութի շրջանի Գթիչի ամրոցը, որը վկայում է գթիչցիների փառապանծ պայքարի մասին՝ ընդդեմ արաբ զավթիչների, XIII դ. Գանձասարի վանքը, որը չորս դար անց պարսիկ ու թուրք նվաճողների դեմ պայքարի կազմակերպման կենտրոն դարձավ և միաժամանակ քաղաքական ասպարեզում ռուսական կողմնորոշման ուղղությամբ արեց առաջին քայլերը: Հանրահայտ են այնպիսի հազվագյուտ շինություններ, ինչպիսիք են Շամխորի շրջանի Թարգմանչաց վանքը, Ջուղայի խաչքարերը (խաչե քարեր) և այլն:

Ցավոք, մենք երբեմն բավականաչափ ուշադիր չենք այս պատմական արժեքների հանդեպ, քիչ ենք հոգ տանում դրանց պահպանման համար, որի հետևանքով դրանցից շատերն ավերակների են վերածվել:

Վերջերս ինձ հայտնի դարձավ, որ Քելբաջարի շրջանում գտնվող Դագիվանքի խաչքարերը վտանգի տակ են: Մինչդեռ դրանք սովորական խաչքարեր չեն, որոնցով այդքան հարուստ է մեր հինավուրց երկիրը: Դրանք բազմաթիվ գիտակներին և արվեստի գնահատողներին հիացմունք պատճառող արվեստի իրական գլուխգործոցներ են: Ժամանակին ֆրանսիացի միսիոներները առաջարկում էին վիթխարի գումարներ միայն այն բանի համար, որ այդ խաչքարերը տեղափոխվեին Փարիզ և ցուցադրվեին Եվրոպայում: Ժամանակին այդ խաչքարերի վրա կառուցվել է բնության

---

[29] *Նամակը տպագրվել է՝ Վ. Հարությունյան. Ազգանվեր ջանքերի հանրագումար. Երևան, 1999, էջ 45:*

երևույթներից դրանց պահպանող մի կամար - ծածկ: Այժմ դրանց վրա ճաքեր են գոյացել և կախարդական քարե նախշերն ավերվում են անձրևից, ձյունից և արևի կիզիչ ճառագայթներից: Հեռու չէ այն օրը, երբ Տերտեր գետի ձորով անցնող ճամփորդը զուր կփնտրի դաղիվանքյան խաչքարերի դմայլող նախշերը:

Ցավոք, մինչև այսօր ոչինչ կամ գրեթե ոչինչ ձեռնարկված չէ մեր հուշարձանները պահպանելու համար: Իհարկե, ինչ-որ չափով մեղավոր են մշակութային մարմինների ղեկավարները, տնտեսվարները և տեղական կազմակերպությունները, որոնք գտնվում են հուշարձանների հարևանությամբ: Բայց նման վերաբերմունքը դալիս է ոչ միայն նրանցից: Վերջերս ես նայում էի Ադրբեջանական ԽՍՀ ատլասը՝ տպագրված 1963 թ., այնտեղ մի բաժին կա՝ «Հանրապետության տարածքի հին և միջնադարյան կարևորագույն պատմա-ճարտարապետական հուշարձանները» (էջ 206-207): Սակայն դրանց շարքում չգիտես ինչու, ընդգրկված չէ իմ թվարկած հայոց հին դարերի հուշարձաններից և ոչ մեկը, ավելին, դրանք ընդհանրապես հաշվառված չեն և չեն գտնվում պետության պահպանության տակ, և Ադրբեջանում սովետական իշխանության գոյության 50 տարիների ընթացքում ռեստավրացիայի չեն ենթարկվել: Աշխատանք չի տարվում նաև դրանց հետազոտման և չափագրման ուղղությամբ, աշխատություններ և հանրամատչելի բրոշյուրներ չեն տպագրվում դրանց մասին:

Առանձին դեպքերում, երբ մեզ տագնապալի լուրեր էին հասնում հուշարձանների հանդեպ անհարգալից վերաբերմունքի դսևորման մասին, փաստեր, որ կոթողներից քարեր են գողանում (ինչպես օրինակ Ջուղա գյուղի, Դաշքեսան շրջանի Քուշչի գյուղի հայկական գերեզմանից), մենք դիմում էինք Ադրբեջանի համապատասխան շրջանի և հանրապետական կազմակերպություններին և ոչ միշտ էինք արձագանք ստանում նրանց կողմից: Չհաջողվեց նաև պարզել, թե Նախիջևանի ԻԽՍՀ-ում գտնվող ի՞նչ հուշարձաններ են մնալու ջրի տակ Արաքս գետի վրա ամբարտակի կառուցման հետևանքով:

Հենց այս իրավիճակները, հարգելի Հեյդար Ալիրզաևիչ, պարտադրեցին ինձ դիմել Ձեզ և խնդրել, որ Ադրբեջանի տարածքում գտնվող հայկական հուշարձանների պետության կողմից պահպանման հարցը դառնա հստակ քննարկման առարկա: Տվյալ դեպքում ես կատարում եմ Պատմական հուշարձանների պահպանության հայաստանյան ընկերության երկրորդ համագումարի պատվիրանը: Այս միությունն ընդգրկում է երկու հարյուր հազար անհատ և երկու հազար կոլեկտիվ անդամներ, որոնք մեր նախնիների հանճարեղ ստեղծագործությունների նախանձախնդիր երկրպագուներն են:

Հասկանալի է, որ որոշ մարդկանց անտարբեր վերաբերմունքը հիշատակած հուշարձանների հանդեպ, որոնց մասին գրում եմ ես, ընավ չի արտացոլում մեր ժողովուրդների փոխհարաբերությունը, մեր բարեկամությունն ու փոխհարգանքը, որոնք դիմացել են բազում դարերի փորձությունների: Այդ պատճառով, մենք համոզված ենք, որ Դուք չահագրգռված կազմակերպություններին կհանձնարարեք մշակել կոնկրետ միջոցառում-

ների ծրագիր՝ բարելավելու համար Սովետական Ադրբեջանի տարածքում գտնվող հայկական հուշարձանների պահպանության գործը: Անհրաժեշտության դեպքում պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերությունը պատրաստ է իր լուման ներդնելու այս ազնիվ գործի մեջ, կհամագործակցի ինչպես մասնագետներ ուղարկելով, այնպես էլ ֆինանսավորելով չափագրական և նախագծային աշխատանքները:

Խորին հարգանքով և լավագույն մաղթանքներով՝

Մարտիրոս Սարյան
ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ,
Լենինյան մրցանակի դափնեկիր,
Սոցիալիստական աշխատանքի հերոս:

Մ. Սարյանի ընտանեկան արխիվ: